

## Հ.Զ. ՂԱԶԱՐՅԱՆ

### ԱԶՔ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Դիտարկվում են հայերենի, ռուսերենի և անգլերենի *աչք* բաղադրիչով ուշադրություն և հսկողություն արտահայտող դարձվածքների առանձնահատկությունները: Ուսումնասիրությունները բացահայտում են նշված առանձնահատկությունների ընդհանրություններն ու տարբերությունները, ինչը վկայում է նշված լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությունների և ազգային յուրահատկությունների մասին:

**Առանցքային բառեր.** փոխանունություն, դարձվածք, իմաստ, նրբիմաստ, համարժեք, ընդհանրություն, տարբերություն, լեզվամտածողություն:

Դարձվածքներն իրենց ծագմամբ հիմնականում ժողովրդական մտածողության արդյունք են: Դրանք նախ ստեղծվում են խոսակցական լեզվում և ապա միայն թափանցում գրական լեզու՝ խոսքին հաղորդելով կենդանություն, պատկերավորություն ու հուզարտահայտչականություն: Դրանց առաջացումը պայմանավորված է բառակապակցությունների (և նախադասությունների) վերաիմաստավորմամբ՝ պատկերավորման միջոցների գործադրմամբ [1]:

Տարբեր լեզուներում դարձվածային միավորների ձևավորման մեջ մեծ դեր են խաղում ոճական և արտահայտչական մի շարք հնարներ՝ փոխաբերությունը, փոխանունությունը, համեմատությունը, շրջասությունը, չափազանցությունը և այլն: Նկատելի է, որ հիշյալ հնարներից ավելի գործուն են փոխաբերությունն ու փոխանունությունը:

Փոխաբերություններն առաջանում են հիմնականում զգայություններից ստացվող արտաքին տպավորությունների միջոցով, ինչպես նաև ժողովրդի բազմադարյան դիտումների և կենսափորձի հիման վրա, որոնք էլ հենց հիմք են ծառայում դարձվածքների առաջացման համար:

Փոխանունությունը հատկապես տարածված է մարմնի անդամների անուններով կազմված դարձվածքներում: Տարբեր լեզուներում հաճախ զգայությունների անունների փոխարեն գործածվում են զգայարանների, իսկ մարմնի անդամների ֆունկցիաների անունների փոխարեն՝ մարմնի անդամների անուններ: Հաճախ մարմնի մեկ անդամի անունը փոխարինում է «մարդուն» և ոչ միայն մարդուն, այլ նաև վերջինիս զգացմունքներին, հատկանիշներին և այլն [2]: Տարբեր լեզուներում, այդ թվում՝ հայերենում, ռուսերենում և անգլերենում, «աչք»

բառը փոխարինում է զգայության, աչքի որևէ ֆունկցիայի անվանը, օրինակ՝ աչքը փոխարինում է տեսողությանն ու նայվածքին, այն հաճախ արտահայտում է նաև մարդու վերաբերմունքը որևէ բանի նկատմամբ, կարծիք կազմելու, հասկանալու կարողությունը և այլն: Այս դեպքում արտաքին տպավորությունները հանգեցրել են հոգեկան տպավորությունների, այսինքն՝ ժողովուրդը արտաքին բնախոսական մեկնաբանություններից անցել է երևույթների բարոյական նշանակության ըմբռնմանը և մտավոր վերացարկումներ կատարելով՝ ձևավորել դարձվածքներ:

«Աչք» զգայարանի ֆունկցիայի հետ սերտորեն առնչվում են նաև ուշադրությամբ դիտելու, զննելու, հետևելու ու հսկելու երևույթները, որոնք իրենց արտացոլումն են գտել «աչք» բաղադրիչով դարձվածքներում: Նման դարձվածքների կարելի է հանդիպել թե՛ հայերենում, թե՛ ռուսերենում և թե՛ անգլերենում, ասել է թե՛ նշված լեզուները կրող բոլոր ժողովուրդների մտածողության մեջ առկա են նշված երևույթները բնութագրող պատկերներ:

Աշխատանքում զուգադրվել են հիշյալ լեզուների ուշադրություն և հսկողություն, ինչպես նաև ուշադրությունից, հսկողությունից դուրս մնալու իմաստներն արտահայտող դարձվածքների իմաստաբանական, քերականական, ոճական առանձնահատկությունները, վերլուծվել են դրանց ընդհանրությունները և տարբերությունները: Բերենք նշված իմաստներն արտահայտող մի շարք դարձվածքներ հայերենում, ռուսերենում և անգլերենում:

**Աչքին ընկնել**,– 1. Հանկարծ երևալ, նկատվել, մի պահ տեսնել, պատահաբար ուշադրությունը գրավել: 2. Ուշադրության արժանանալ: *Բավական հեռու տեղից լուսնի պարզ լուսովը վերջապես Սաքոյի աչքին ընկավ էջմիածնի գմբեթի փայլուն գլուխը:* (3, 221): *Մեկ էլ ետ նայեց և նրա աչքին ընկավ մառանի բաց դուռը* (4, 300): **Աչքը մի բանի վրա ընկնել**,– Մի բան ուշադրությունը գրավել, տեսնել, նկատել: *Այդ միջոցին նրա աչքը ընկավ իր երկու զավակների վրա, և ձայն խեղդվեցավ* (5, IV, 409): **Աչքը չորս բանալ / բաց անել**,– 1. Աչալուրջ, շատ ուշադիր՝ զգույշ լինել: 2. Ուշադրությունը լարել, զգաստանալ: *Իսկ հիմի աչքերդ չորս բաց արա, նա դեպի բերդն է գալի* (3, 361): *Թագավորը մի կարաս ոսկու անունը լսում է թե չէ՝ աչքերը չորս է բաց անում* (6, V, 194): **Աչքի զգել**, – Ուշադրության առարկա դարձնել, իր վրա ուշադրություն գրավել: *Մարկիզն ավարտում էր իր փուլեպը ու անց էր կացնում կարմիր լայն ժապավենը, որը պեպք է նրան աչքի զգեր որպես այդ հավաքույթի առաջին անձնավորություն* (7, 49): **Աչքի զարկել / զարնել / երևալ**, – Երևալ, նկատվել, ուշադրություն գրավել: *Դա նախ աչքի կզարնվեր և երկրորդը՝ ի՞նչ պատրվակով գնար Արևիկի մոտ* (8, 206): **Աչքի ընկնել**, – Նկատվել, երևալ, ուշադրություն գրավել: *Այդ խմբերի մեջ*

աչքի էր ընկնում Առաքելինը, որի մեջ մտածները ընտիր հեծյալներ էին Ձմեռոցից և Ջարեհավանից (9, 504): **Աչքից չվրիպել**, – Ուշադրություն դարձնել, նկատել, տեսնել: Մարգարյանի աչքից չէր վրիպում, որ Հասրաթյանը նեղվում է (8, 406): **Աչք դարձնել**, – Նայել, ուշադրություն դարձնել: Նա աչք էր դարձնում մի ժամանակ գեղեցիկ և մարդաշար գյուղերի վրա (5, IV, 355): **Չորս աչքով նայել / հետևել / մտիկ տալ**, – Ամբողջ ուշադրությամբ, լավ: *Լացդ կգա, Հաքու՛լ, որ հեյս գաս՝ խարջը փանենք խազինեն փանք, դու մի փե՛ս, թե էն ասիզանցու թղթերը ո՞նց են չորս աչքով մտիկ փայխս* (3, 156): **Աչքի մեկը տասը դարձրած**, – Շատ ուշադիր: *Ուստա Մարգարն աչքերը մեկը փասը դարձրած ման էր գալիս գործարանում* (10, 209): **Աչքերը չորս անել / շինել**, – 1. Անակնկալից զգաստանալ, ուշադրությունը լարել: 2. Ուշադիր նայել, լավ հսկել, աչալուրջ հետևել: – *էդ ո՞րտեղ է,- աչքերը չորս է անում խելոք ախպերը* (6, V, 193):

Ինչպես նկատում ենք, վերջին երեք դարձվածքների հիմքում ընկած է չափազանցություն ոճական հնարը:

**Աչքերը դարձնել**, – Նայել տվյալ ուղղությամբ, մի բանի վրա ուշադրություն կենտրոնացնել: *Եթե հանկարծ աչքը դեպի դիմացի պատը չդարձներ, շար կարելի է վայր կընկներ* (3, 308): **Մի աչք / աչք-ականջ / շունջ / հոգի դառնալ**, – Ուշադրությունը կենտրոնացնել, խիստ լարվել: *Ամենքն էլ աչք ու ականջ դառան, որ փեսանն՝ աղջիկն ինչ պիտի պատմի* (11, 528): **Աչքից չփախցնել**, – Հսկողության տակ պահել, ակնդետ հետևել, հսկել, տեսադաշտում պահել: *Դու Սմբարին ու էս երկու փղեքանցը հրամայի, բանտը մտնին, ինձ հրաման փուր, որ դանը Սաքոյի բուսումը պահեմ, որ աչքից չփախցնեմ* (3, 373): **Աչքը / աչքերը վրան պահել**, – Ուշադիր նայել՝ հսկել, զգույշ լինել, պահպանել: – *Քեզի քացի կփան, աչքդ վրան պահիր* (4, 162): *Հեռացրեք մոտից ինչ որ կարող է նրան վնասել: Եվ միշտ ձեր աչքը վրան պահեցեք* (12, 316): **Աչքով պահել**, – Հայացքով հետապնդել, հետևել, ուշադրությունը չհեռացնել: *Թագավորի փղեն երկիցը գնում է, որ աչքով պահի, փեսնի, թե ո՞ւմ փունն է մտնում* (6, V, 383): **Աչքերով հետևել / ուղեկցել**, – Աչքը մեկի վրա պահել, իր ուշադրությունից, հայացքից չհեռացնել: *Ուժահատ հանդարտեցրեց նա յուր ձայնն ու քայլերը և աչքով միայն հետևում էր բազմությանը* (3, 361): **Աչքի առաջ լինել**, – Հսկողության տակ լինել, ուշադրության մեջ լինել: *Թագուհին կռահեց նրա միտքը: «Ուզում է, որ միշտ իր աչքի առաջ լինեմ»* (7, 48): **Աչքի առաջ/առջև**, – Մեկի հսկողության տակ: *«Վերջապես, մեր հազարապետի Վարսենիկն ի՞նչ պակաս աղջիկ է, մեր աչքի առջև մեծացած, մեր ձեռքով կրթված»* (11, 224): **Աչքի/աչքերի տակ**, – Հսկողության տակ, աչքի առաջ: *Հեփո ես փորձեցի փունս շինել դարձյալ Իմ հրդեհված հոգու մի բուռ մոխրով,- Մերթ Նեղոսի ափին, սֆինքսի աչքի տակ, Ում գաղտնիքի՛ց ան-*

գամ իմ վիշտն էր խոր (13,1, 331): **Աչքի տակ առնել**,– Հետևել, հսկել, աչքը վրան պահել: Երբ էլ հնարավորություն չի լինում բնական պահանջին հարթել, արյուններս աչքի տակ առած՝ դուրս ենք գալիս (3, 254): **Աչքի տակով / տակից դիտել, հսկել, հետևել / չափել / նայել**, – Ծածուկ, գաղտնի հսկել, հետևել, աննկատելիորեն նայել: Նրան ուղեկցում էր Աղվանքի իշխան Վահանը, որ աչքի տակով նայում էր նրա գունապ, այլապես դեմքին (9,436): **Աչքը մի բանի վրա լինել/ վրան պահել**,– Ուշադիր լինել, ուշադիր հսկել, հետևել: Մի տեսնենք, թե ամեն մեկիս էդքան հասնում ա. գիտե՞ս քանի աչքեր կան էդ փողի վրա (3, 36): **Աչքը զգել**,– 1.Աչքը հառած նայել, հանկարծ ուշադրություն դարձնել: 2. Հսկել, հետևել: Հույն զորավար Անապոլը Միջագետքում նստած աչքը զգել է Պարսկաստանին՝ կանխելու համար նրա հանկարծակի հարձակումը (9,302): **Աչքը չկտրել / չհեռացնել** (մեկից /մի բանից), – Աչքը չհեռացնել, ուշադիր հսկել: Բայց և այս խոսակցությունից անկախ՝ Գաղիշոն աչքը չէր հեռացնում Վարդանի ձեռքի վերքից (9, 322): **Бросаться /броситься в/на глаза**,– Ուշադրությունը գրավել, նկատվել: *Вот почему, я обращал на неё внимание, следил за нею, это-то внимание бросилось вам в глаза* (14, 288). **Лезть в глаза** (ժղվրդ.),– Մեկի ուշադրությունն իր վրա սևեռել: *Лезет мне в глаза обручением!* (15, 90). **Попадаться /попастся на глаза**,– Հանկարծակի նկատվել, ուշադրությունը գրավել: *Револьвер, отброшенный Дуней и отлетевший к дверям, вдруг попался ему на глаза* (16, 477). **Играть глазами**, – Արտահայտիչ հայացքներ ձգել / զգել մեկին՝ փորձելով ուշադրություն գրավել: *Аксинья смеялась, играя из-под платка черными глазами* (17, 115). **Не упустить / упускать из глаз**, – Աչքից բաց չթողնել, շատ ուշադիր նայել, հետևել: *Мы ни в коем случае не должны упустить этих ребят из глаз*. **Запускать глаза** (ժղվրդ.), – Թաքուն նայել, հետևել: *Соседи тоже запускают глаза на этот дом*. **Не сводить глаз**,– Ուշադիր հետևել մեկին: *Она тихо подошла к нему, села на постель, подле и ждала, не сводя с него глаз* (16, 391). **Во все глаза** (համակ ուշադրությամբ),– *Та отскочила в испуге, хотела бы что-то сказать, ни как будто не смогла и смотрела на него во все глаза* (16, 73). **Be all eyes**, – Նայել ամբողջ ուշադրությամբ: *He was all eyes as the train sped through the country*. **Be in /come into/get into the public eye**, – Ուշադրության կենտրոնում լինել, գրավել հասարակության ուշադրությունը: *There was, however, at this time, one theatre, the Chicago Opera House, which was considerably in the public eye, and its manager, David A. Henderson had a fair local reputation* (18, 101). **Have (got) an / one's eye on sb / sth**,– Հետևել մեկին: *“I'm going, but remember what I've said, I'll still have my eye on ye!* (19, 38). *I have had my eye on that young man for some*

*time* (20, 164). **With all one's eyes / with all the eyes in one's head**,– Շատ ուշադիր, աչքերը չորս արած: *She was looking at what the man was doing with all her eyes.* **Jump/ leap to the eye/ strike one's eye/ take sb's eye**, – Աչքի ընկնել, ուշադրությունը գրավել: *The plan was so ingenious that it did not at once leap to the eye* (21, 254). **Have/ keep one's eyes about one / open / wide open**,– Ուշադիր հետևել դիտել (խսկց.) *He went further, and in a private talk with Hermann told him to keep his eyes open for an automobile agency and garage* (22, 404). **Have/ keep an/ one's eye/ a sharp eye on sth/ sb**,– Մեկին, մի բանի հետևել: *He had felt his pulse quicken a trifle at the business manager's brusqueness, and upon him he kept an alert eye* (22, 315). **One's eye is on sb.**,– Աչքը վրան լինել, հետևել մեկին: *He made several efforts to creep out of his scrape, but the old man's eye was upon him and he made blunder after blunder* (23, 172). **Under the eye of sb**,– Մեկի հայացքի, հսկողության տակ: *For weeks she had eaten nothing, but the insipid choking mouthfuls thrust down at meal time under the eye of her father* (19, 180).

Ինչպես նշեցինք, իմաստային այս դաշտը ներառում է նաև «ուշադրությունից, հսկողությունից, տեսադաշտից դուրս մնալու» իմաստն արտահայտող դարձվածքներ:

**Աչքից բաց թողնել**,– Չնկատել, տեսադաշտից բաց թողնել: *Բայց չենք իմացել, բաց ենք թողել աչքից* (8, 40): **Աչքի տակով(ն) անցկացնել** (բրբ.),– Անտես անել, ուշադրություն չդարձնել(մեկի անազնվության, հանցանքի վրա): *Աչքի տակով անց կացրու, գնա քո գործին, աստված բանդ հաջողի* (3, 162): **Աչքը թեքել**,– Ուշադրությունը մի բանից հեռացնել, աչքը շեղել: *Գողն էլ մի կոնից, գելն էլ մի կոնից, Աչքդ թեքեցիր - բանիդ տերը չես* (24, III, 73): – *Ձիդ նստի ու առանց ժամանակ կորցնելու, առանց աջ ու ձախ աչք թեքելու՝ էս թղթերը ջերդ դի՛ր ու կրակի նման թո՛ի՛ Աշտարակ* (3, 231): **Աչք փակել/ խփել**, – Չտեսնելու տալ, ներողամիտ լինել, անուշադրության մատնել, անտեսել: *Հո չի կարելի փաստերի, անհերքելի ճշմարտության առաջ աչք փակել* (7,59): **Աչքը ծռել**,– 1.(մեկի կողմը) Մի բանի վրա ուշադրություն դարձնել, ցանկություն ունենալ մեկի նկատմամբ: 2.(մեկից կամ մեկի վրա) Աչքը թեքել, ուշադրություն չդարձնել, մեկի հանդեպ վերաբերմունքը փոխել, թշնամանալ: *Դու էլ ինձ լսիր, մովրովի աչքը վրեդ մի ծռիլ, Սաքոյին փեսա շինի, աստված էլածն օրինի* (3, 215): **Աչքից փախչել**,– Ուշադրությունից վրիպել, չտեսնել: – *Միթե իմ աչքիցս այդպիսի բանը կարեր փախչել* (3, 290): **Աչքաթող անել**, – Անտեսել, ուշադրություն չդարձնել: – *Հրեդ, դու էլ մեկ-մեկ կամը ծուռ քաշողին աչքաթող ես անում, Խաչատուր* (8, 387): **Закрывать/ закрыть глаза (на что/ перед чем)**,–

Միտումնավոր կերպով ուշադրություն չդարձնել ինչ-որ բանի վրա, անտեսել: *Я отдался всем своим впечатлениям и сам с собой лукавил, отворачивался от воспоминаний и закрывал глаза перед тем, что предчувствовал впереди* (25, 53). **Close / shut one's eyes to sth / turn a blind eye on / to sth**, - Աչքերը փակել մի բանի վրա, մատների արանքով նայել, անտեսել, ուշադրություն չդարձնել: *Do you suspect the people in charge of her of closing their eyes purposely* (26, 328).

Այս իմաստային դաշտում տեղ են գտել նաև մի քանի այլ դարձվածքներ՝ **աչքերով խաղալ** (Իր վրա ուշադրություն հրավիրել), **աչքով ճամփել** (հայացքով հետևել, հետևելից նայել), **աչքը դռանը պահել** (մտիկ տալ – տունը հսկել՝ պահպանել տանից չհեռանալ), **աչքը մեկի վրա պահել** (մեկին հսկել, հետևել), **աչք / աչք-ականջ դառնալ**, – ուշադրությունը կենտրոնացնել, խիստ լարվել (մի բան տեսնելու կամ լսելու), **աչք բռնել**, – հսկել, հետամուտ լինել, **աչքերի նետը լարել (գրք.)**, – ուշադիր՝ ականապիշ նայել, հայացքով հետևել, **աչքերը ջրել (հզվդ.)**, – լարվել, ուշադիր լինել, **աչքին խփել**, – ուշադրություն գրավել, **արգոսի աչքեր (գրք.)**, – ծածուկ հետևող՝ հետապնդող աչքեր, **աչքի մեկը / մինը հազար անել / շինել / դարձնել**, – ուշադիր, լարված, հետևել, հսկել, **աչքի տակ պահել**, – հսկել, վերահսկել, հետևել, **արթուն աչքով**, – հսկող աչքով, զգոնությամբ, **երկու աչքով նայել**, – ուշադիր՝ ականապիշ նայել, հետևել, հսկել, ոչինչ բաց չթողնել, **աչքից վրիպել**, – չնկատվել, ուշադրությունից վրիպել, **աչքերը բթանալ**, – անզգա դառնալ, այլևս ուշադրություն չդարձնել, **աչքից թողնել**, – աչքաթող անել, անուշադրության մատնել, **глаз да глаз нужен**, – պետք է ուշադիր հետևել մեկին, **и глазом не ведёт**, – ոչ մի հետաքրքրություն կամ ուշադրություն չի դրսևորում, **collect eyes**, – ուշադրություն գրավել, **the cynosure of all eyes** (գրք.) – ուշադրության կենտրոն, կիզակետ, **make/ throw eyes at sb/ give sb the big eye**, – աչքերով խոսել, աչքերով ուշադրությունը գրավել, **keep one eye on sb/ sth**, – աննկատելիորեն նայել, հետևել և այլն:

Ինչպես ցույց է տալիս իմաստային այս դաշտի դարձվածքների ուսումնասիրությունը, դրանց մեծ մասը մենիմաստ կապակցություններ են: Բազմիմաստ դարձվածքների իմաստներից դիտարկվել են միայն այս դաշտին բնորոշները: Միայն սակավաթիվ դեպքերում (**աչքին ընկնել**, **աչքը ծռել**, **աչքը չորս անել / բանալ / բաց անել**) բազմիմաստ դարձվածքների իմաստներից բերվել են երկուսը, որոնք հատուկ են այս դաշտին: Ուշագրավ է **աչքը ծռել** դարձվածքը, որի երկու իմաստներն էլ թեև դիտարկվող դաշտում են, սակայն հակադրվում են միմյանց:

Վերլուծելով բերված դարձվածքների իմաստները՝ նկատում ենք, որ բացի դաշտին բնորոշ ընդհանուր «ուշադրություն, հսկողություն» իմաստից, որոշ

դարձվածքներ ունեն նաև իմաստային այլ նրբերանգներ: Այսպես, բոլոր երեք լեզուներում առկա են այնպիսի դարձվածքներ, որոնք արտահայտում են «ուշադրություն դարձնելու» և «միտումնավոր կերպով իր վրա ուշադրություն հրավիրելու, գրավելու» (**աչքի(ն) ընկնել, աչքը ծռել, աչքը մի բանի վրա ընկնել, աչքի զարկել, աչք ծակել, աչքից վրիպել, աչք դարձնել, աչքին խփել, աչքը զգել, бросаться в/на глаза, глаз положить (на кого), лезть в глаза, попадаться в глаза, играть глазами, collect eyes, jump/ leap to sb's eye, make/ throw eyes at sb**), իմաստային նրբերանգները:

«Գաղտնի, ծածուկ հսկողության» (**աչքի տակով / տակից դիտել / հսկել, Արգոսի աչքեր, запускать глаза, have / keep one eye on sb / sth**), ինչպես նաև «դիտավորյալ չտեսնելու, անտեսելու, ուշադրություն չդարձնելու» (**աչք փակել, խփել, закрывать / закрыть глаза (на что), close / shut one's eyes to sth, turn a blind eye on/ to sth**). նրբիմաստները ևս կարելի է նկատել երեք լեզուներում: «Ուշադրության լարումը, կենտրոնացումը, լարված հսկողությունը» նկատվում է թե՛ հայերենում ու ռուսերենում, թե՛ անգլերենում (**մի աչք / մի աչք-ականջ դառնալ, աչքը / աչքերը չորս / անել / շինել/, չորս աչքով նայել, աչքերը մեկը տասը դարձնել, աչք ու ականջ, աչքի մեկը/ մինը հազար անել, во все глаза, the cynosure of all eyes, with all one's eyes**):

«Հասարակության ուշադրությունը գրավելու» նրբիմաստը կա միայն անգլերենում (**be in / come / get into the public eye**), իսկ «զգուշության, աչալրջության, զգոնության, անզգայության» նրբերանգները առկա են միայն հայերենի դարձվածքներում (**աչքը չորս բանալ / բաց անել, արթուն աչքով**): «Պահպանության նպատակով հսկելու, հետևելու» իմաստն էլ նկատվում է հայերենում և անգլերենում (**աչքը վրան պահել, աչքը դռանը պահել, have/ keep an/ one's eye on sb/ sth**):

Ուսումնասիրված դարձվածքները պատկանում են կառուցվածքային տարբեր տիպերի: Բոլոր լեզուներում գերակշռողը բայական կառույցներն են: Ի դեպ ռուսերենի բոլոր դարձվածքները բայական են բացառությամբ մեկ հաղորդակցական դարձվածքի՝ **глаз да глаз нужен**: Հայերենում և անգլերենում բայական դարձվածքների կողքին հանդիպում են նաև գոյականական (**աչք ու ականջ, Արգոսի աչքեր, the cynosure of all eyes**) և մակբայական (**աչքերի մեկը տասը դարձրած, աչքի առաջ/ առջև, աչքի/ աչքերի տակ, with all one's eyes, with all the eyes in one's head, under the eye of sb**) կառույցներ: Բայական կառույցների կվերածվեն որոշ դարձվածքներ, եթե դրանք ծավալվեն անորոշ դերբայով: Հայերենի դարձվածքների շարքում նկատելի են հարադրությամբ ձևավորված մեկ-երկու դարձվածքներ՝ **աչք ու ականջ, աչք-ականջ դառնալ, մի աչք-ականջ**

**դառնալ:** Որոշ դարձվածքներում նկատելի է նաև չափազանցությունը, որն առկա է բոլոր երեք լեզուներում՝ **աչքերը չռել, во все глаза, with all one's head** և այլն:

Դարձվածքներում գործում են քերականական տարբեր կարգեր՝ անվանական՝ առկայացման, թվի, հոլովի և բայական՝ դեմքի, թվի, եղանակի, ժամանակի, սեռի, հաստատական-ժխտականի: Այս կարգերից մի քանիսը, որոշ դեպքերում, ունեն իմաստատարբերակիչ դեր, այսինքն, եթե քերականական հիշյալ կարգերն օգտագործվեն այլ կերպ, ապա դարձվածքները կգրկվեն իրենց իմաստից (երբեմն տվյալ նրբիմաստից), մյուս կարգերն օժտված չեն նման դերով: Դարձվածքների բաղադրիչների միջև շարահյուսական հարաբերություններն արտահայտվում են ըստ ուսումնասիրվող լեզուների տիպաբանական առանձնահատկությունների՝ հայերենում՝ հոլովական վերջավորություններով (կապական բառերով ձևավորված դարձվածքները խիստ սակավաթիվ են), անգլերենում՝ նախդիրներով, իսկ ռուսերենում՝ թե՛ առաջին, թե՛ երկրորդ ձևերով: Կառույցների գլխավոր անդամն էլ տարբերվում է ըստ կառուցվածքային տիպերի:

Դաշտում տեղ են գտել նաև մի քանի դարձվածքային տարբերակներ՝ **աչքի զարկել / զարնվել** (քերականական), **աչքերը չորս անել / շինել** (բառային), **աչք / աչք-ականջ դառնալ** (բառային), **աչքը / աչքերը վրան պահել** (քերականական), **աչքի տակով / տակից դիտել / հսկել** (քերականական), **попадаться / попасться на / в глаза** (քերականական), **не упустить / упустить из глаз** (քերականական), **be in / come / get into the public eye** (բառային և քերականական), **jump / leap to one's eye** (բառային), **have / keep an eye on sb.** (բառային), **close / shut ones eyes to sth** (բառային) և այլն:

Դաշտի առաջին՝ «ուշադրություն, հսկողություն» և երկրորդ՝ «ուշադրություն չդարձնելու, հսկողությունից դուրս մնալու» ենթադաշտերից յուրաքանչյուրի դարձվածքները միմյանց հետ հոմանշային հարաբերության մեջ են գտնվում, սակայն խմբերում կարելի է առանձնացնել նաև ավելի նեղ հոմանշային շարքեր ըստ արտահայտվող նրբիմաստների, ինչպես՝ **աչքին ընկնել - աչքը մի բանի վրա ընկնել - աչքի զարնել - աչքի ընկնել - աչքից չվրիպել, աչքի տակով / տակից դիտել - արգոսի աչքեր, աչքը չորս բանալ / բացել - աչք / աչք-ականջ դառնալ - չորս աչքով նայել - աչքերը մեկը տասը դարձած - աչքերը չորս անել / շինել - մի աչք / աչք-ականջ դառնալ - աչքերի նետը լարել, աչքից չփախչել - աչքի առաջ լինել - աչքի տակ - աչքի տակ առնել - աչքի տակով հսկել / դիտել - աչքի մեկը հազար անել - աչքը չկտրել, աչքից վրիպել - աչքից բաց թողնել - աչքը թեքել - աչքից փախչել, бросаться / броситься**

**в/на глаза – глаз положить /на кого – попадаться на глаза – не сводить глаз, лезть в глаза – играть глазами, the cynosure of all eyes – be in/ come into the public eye, collect eyes – jump/ leap to the eye – make /throw eyes at sb, have / got an eye on sb /sth – have /keep an eye on sb /sth - have /keep one eye on sb /sth – one’s eye is on sb** և այլն:

Դաշտում տեղ գտած երկու խմբերն իրենց ընդհանուր իմաստով հականիշներ են: Խմբերի ներսում հականշային զույգեր, բնական է, առկա չեն:

Դարձվածքների մեծ մասը հատուկ է միայն այս կամ այն լեզվին՝ **աչքը դռանը պահել, աչք ու ականջ, աչքի մինը հազար անել, աչքը ծռել, մի աչք/ աչք-ականջ դառնալ, глаз да глаз нужен, лезть в глаза, collect eyes, be in the public eye, the cynosure of all eyes** և այլն, սակայն հանդիպում են նաև այնպիսիները, որոնք ունեն իրենց համարժեքները մյուս մեկ կամ երկու լեզուներում, ինչպես, օրինակ՝ **աչքի ընկնել – попадаться на глаза, աչքը չկտրել /չհեռացնել – не сводить глаз, աչքի ընկնել – бросаться в глаза, աչքից բաց չթողնել – не упускать из глаз, աչք /աչքերը փակել – закрыть /закрывать глаза (на что) – close /shut one’s eyes to sth, աչքը վրան պահել – have /keep one’s eye on sb/sth, աչքը գցել – throw eyes at sb, աչքերով խաղալ – играть глазами, աչքերը չորս արած – with all one’s eyes** և այլն:

Հարկ է նշել, որ ռուսերենի **глаз положить (на кого)** դարձվածքն ունի իր բաղադրիչային համարժեքը հայերենում՝ **աչք դնել**, սակայն վերջինս ունի «հավանել, դուր գալ» իմաստը:

Ամփոփելով՝ նշենք, որ դաշտում տեղ գտած դարձվածքները օգտագործվում են ժողովրդախոսակցական լեզվում, գրքային ոճում և բարբառներում (հազվադեպ): Նկատելի է, որ դրանցով չափազանց հարուստ է նաև գեղարվեստական գրականությունը:

Հայերենի, ռուսերենի և անգլերենի «աչք» բաղադրիչով ուշադրություն և հսկողություն արտահայտող դարձվածքների իմաստային, կառուցվածքային, քերականական, ոճական առանձնահատկություններն ունեն ընդհանրություններ և տարբերություններ: Այդ ընդհանրություններն ու տարբերությունները վկայում են հիշյալ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությունների և տարբերությունների մասին, որոնց վերհանումը կարող է նպաստել լեզվաբանական ընդհանրությունների բացահայտմանը դարձվածաբանության ոլորտում:

#### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. **Քոսյան Վ.**, Դարձվածաբանություն. **Գ. Զահուկյան, Էդ. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան**, «Հայոց լեզու» գրքում, 1 մաս, պրակ Ա. -Ե., 'Լոյս' հրատ., 1980:

2. **Գևորգյան Ե.**, Հայերենի դարձվածքները. -Ե., Երևանի համալս. հրատ., 1969:
3. **Պողոջյան Պ.**, Հացի խնդիր. -Երևան, Հայաստան հրատ., 1968:
4. **Բակունց Ա.**, Երկեր. «Սովետ. գրող» հրատ., 1986:
5. **Րաֆֆի**, Երկերի ժողովածու 10 հատորով.- Հ. 1, 3,4, Ե., 1983-1984:
6. **Թումանյան Հովհ.**, Երկերի լիակատար ժողովածու.- Հատ. 1-10, հատ 5.- Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 1994:
7. **Սուքիասյան Ա., Գալստյան Ս.** Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան. - Երևանի համալս. հրատ., 1975:
8. **Խանգաղյան Ս.** Հողը. - Ե., 1964:
9. **Դեմիրճյան Դ.** Վարդանանք. - Երևան, 1987:
10. **Թորգոմյան Ծ.** Պատմվածքներ. -Ե., 1973:
11. **Աղայան Ղ.** Երկեր, Երևան, 'Սովետ. գրող' հրատ., 1979:
12. **Շեքսպիր Վ.** Երկեր. -Ե., 1991 (թարգմանություն):
13. **Սևակ Պ.** Երկերի ժողովածու 6 հատորով. -Հ.1-4.- Ե., 1972-73:
14. **Достоевский Ф.М.** Бедные люди. Повести. -Л., 1984.
15. **Гоголь Н.В.** Пьесы. -М., 1983.
16. **Достоевский Ф.М.** Преступление и наказание. -М., 1983.
17. **Квеселевич Д.И.** Русско-английский фразеологический словарь. -М., 1998.
18. **Dreiser Th.** Sister Carrie. -М., 1968.
19. **Cronin A.J.** Hatter's Castle. -М.: "FL. Publ. House", 1963.
20. **Galsworthy J.** The White Monkey.- М.: "FL Publ. House", 1956.
21. **Кунин А.В.** Англо-русский фразеологический словарь. - М.: Совет. энциклопедия, 1982.
22. **London J.** Martin Eden. -М., 1953.
23. **Twain M.** The Adventures of Tom Sawyer. - М.: "FL Publ. House", 1948.
24. **Թումանյան Հովհ.**, Երկերի լիակատար ժողովածու.- Հատ. 3. -Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 1993:
25. **Тургенев И.С.** Три встречи. -Л., 1979.
26. **Collins W.** The Woman in White. -USA, 1934.

### **Ա.Յ. ԿԱԶԱՐՅԱՆ**

#### **ФРАЗЕОЛОГИЗМЫ, ВЫРАЖАЮЩИЕ ВНИМАНИЕ И КОНТРОЛИРОВАНИЕ НА АРМЯНСКОМ, РУССКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ**

Рассматриваются особенности армянских, русских и английских фразеологизмов с компонентом "глаз", выражающих внимание и контролирование. Исследования указанных особенностей свидетельствуют об общностях и различиях языкового мышления народов-носителей сопоставляемых языков.

**Ключевые слова:** метонимия, фразеологизм, значение, семантический оттенок, эквивалент, общность, различие.

H.Z. GHAZARYAN

**PHRASEOLOGICAL UNITS EXPRESSING ATTENTION AND CONTROL  
IN ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH**

The peculiarities of the Armenian, Russian and English phraseological units with the component “eye” expressing attention and control are considered. The studies reveal some similarities and differences of the mentioned peculiarities which come to prove the similarities and differences in the linguistic thinking of the peoples speaking the mentioned languages.

**Keywords:** metonymy, phraseological, unit, meaning, semantic shade, equivalent, similarity, difference, linguistic thinking.

ՀՏԴ 811.19'161.1'111:159.922.2

**Հ.Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ԿՐԱԿ ԵՎ ՀՈՂ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ  
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

Դիտարկվում են *կրակ* և *հող* բաղադրիչներ պարունակող դարձվածային միավորները հայերենում, ռուսերենում և անգլերենում: Ներկայացված են դրանց իմաստային, կառուցվածքային, քերականական ընդհանրություններն ու տարբերությունները՝ կախված նշված լեզուների կառուցվածքային առանձնահատկություններից և ազգային լեզվամտածողությունից:

**Առանցքային բառեր.** դարձվածային միավոր, բաղադրիչ, իմաստային, քերականական տարբերություններ, կառուցվածքային առանձնահատկություններ:

**Ներածություն:** Դարձվածքի հիմնական բաղադրիչը լեզվի ընդհանուր բառաֆոնդին պատկանող և մշտական գործածություն ունեցող բառ է: Մտածողության և կենսափորձի զարգացման հետ մարդը բառերին նոր իմաստներ է սովել ու իր մտքերն ավելի արտահայտիչ դարձնելու նպատակով կազմել է այնպիսի բառազուգորդումներ, որոնց բաղադրիչները հանդես են եկել փոխաբերական իմաստներով, և բառակապակցությունը ձեռք է բերել նոր իմաստ: Տարբեր ժողովուրդներ համանման երևույթների վերաբերյալ տարբեր դարձվածքներ են կազմել՝ արտացոլելով ժողովրդի կյանքն ու մշակույթը, պատմությունը, հոգեբանությունը, կենցաղային պայմանները, ազգային ինքնատիպությունն ու ժողովրդի մտածողության յուրահատկությունը: Վերահիմաստավորված բառակապակցությունը կիրառվել է մարդուն, առարկաներն ու իրավիճակը բնութագրելու համար, խոսքի ուժն ազդեցիկ և պատկերավոր դարձնելու նպատակով: